— Տանում եմ «աստծու մարդու» համար, — պատասխանեց նա հանդարտ կերպով:

— Ո՞վ է «աստծոյ մարդը»:

— Նա գրում է թիլիսմաններ, եւ որ տղային սիրում է աղջիկը, նրան բերում է այն աղջկայ համար:

— Ուրեմն դու սիրո՞ւմ ես մէկին:

— Ահմէի որդի Սաֆօին: Նա մի քաջ որսորդ է:

— Իսկ այդ գառը քո հօր հոտի՞ցն է:

— Ես նրան գողացայ ճանապարհին գալու ժամանակ:

— Երեւի, հայերի ոչխարներից: Այդպէս չէ՞:

— Բա՛ որտեղի՞ց: Քրդի գառը ես չեմ գողանայ:

— Հեռո՞ւ է քո հօր չադրը:

— Խանա-սորի այն կողմը: Ես այնտեղից դուրս եկայ, երբ լոյսը դեռ չէր ծագել: Հայրս չիմացաւ:

Աւելի քան երեք մղոն ճանապարհ էր եկել քրդուհին: Նա նայեց դէպի վեր, տեսնելու թէ արեւը որտեղ էր կանգնած եւ շարունակեց իր ճանապարհը, ասելով.

— Ես հեռու պէտք է գնամ. «աստծոյ մարդը» կենում է այստեղից շատ հեռու. տե՛ս, այն կապոյտ սարերի մէջ: Թէ մի օր կը պատահի քեզ անցնել Խանա-սորի ձորով, հարցրու այնտեղ Գիւլիի հօր չադրը, նրան կոչում են Ռահմանի որդի Ռահիմ. նա Բիբլասների ցեղապետն է: Գիւլին շատ սիրեց քեզ, դու օգնեցիր նրան:

Քո աչքերը նմանում են նրա Սաֆոյի սուրմայած աչքերին: Գիւլին հանգստութիւն կը տայ քեզ իր հօր չադրում, մի ամսական գառը կմորթէ քեզ համար:

Ես կամեցայ գեղեցիկ քրդուհու քաղցրախօսութեանը պատասխանել նոյն ոճով եւ ասացի.

— Բայց Գիւլին նմանում է քեաֆար գիւլի (մուգ-ծիրանի գոյն ունեցող վարդի):

Քրդուհի օրիորդի գորշ, բայց սիրուն դէմքի վրայ փայլեց մի ժպիտ, նա երեսը շուռ տոեց, շարունակեց իր ճանապարհը, ասելով.

— Աստուած կը տա՛յ ինձ մի օր, որ կը սպանեմ այն սատանայի քաճին... Նա ցոյց տոեց Մարօի վրայ եւ հեռացաւ: